ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2025 թվականի թիվ 135-Ա

ք. Երևան

«ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 43-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության 2025 թվականի նոյեմբերի 10-ի հեղինակազորման հայտը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել հայտը և հեղինակազորել «ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը՝ տալով տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 19
ք. Երևան